

|  |   |
|--|---|
| <b>Համարը N 409</b><br><b>Տիպը</b> Որոշում<br><b>Սկզբնաղբյուրը</b> ԼՂՀՊՏ-ում չի հրապարակվել<br><b>Ընդունող մարմինը</b> ԼՂՀ կառավարություն<br><b>Ստորագրող մարմինը</b> ԼՂՀ Վարչապետ<br><b>Վավերացնող մարմինը</b><br><b>Ուժի մեջ մտնելու ամսաթիվը</b> 16.11.2004 | <b>Տեսակը</b> Մայր<br><b>Կարգավիճակը</b> Գործում է<br><b>Ընդունման վայրը</b> Ստեփանակերտ<br><b>Ընդունման ամսաթիվը</b> 16.11.2004<br><b>Ստորագրման ամսաթիվը</b> 16.11.2004<br><b>Վավերացման ամսաթիվը</b><br><b>Ուժը կորցնելու ամսաթիվը</b> |
|--|---|

ԼՂՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՑԱՄԱՔՈՒՐՈՒՄՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ  
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՐԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

"16" նոյեմբերի 2004թ.

N 409

ք.Ստեփանակերտ

ՋՐԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ջրային օրենսգրքի 121-րդ հոդվածի 5-րդ մասի 30-րդ կետին համապատասխան՝ ԼՂՀ կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

Հաստատել **ցամաքուղղային** ջրերի օգտագործման կարգը՝ համաձայն հավելվածի:

ԼՂՀ վարչապետ

Ա. Դանիելյան

Հավելված  
ԼՂՀ կառավարության  
2004թ. նոյեմբերի 16-ի  
թիվ 409 որոշման

Կ Ա Ր Գ

ՋՐԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են ԼՂՀ-ում **ցամաքուղղային** ջրերի օգտագործման հետ կապված պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, իրավաբանական անձանց և քաղաքացիների միջև հարաբերությունները:

2. Սույն կարգում օգտագործվող հասկացություններն ունեն հետևյալ իմաստները՝  
(դրենաժային) համակարգ՝ գրունտային ջրերի մակարդակն իջեցնող և դրանց հեռացման համար անցկացվող բաց ջրանցքների, փակ ցամաքուղղային (դրենաժային), չորացման հողերի և համապատասխան կառուցվածքների համակարգ,

ջրեր՝ **ցամաքուղղային** համակարգով հեռացվող ջրեր,  
դիմախո՝ ջրառի իրականացման նպատակով ստեղծված արհեստական պատնեշ:

3. **Ցամաքուղղային** ջրերի օգտագործումը, բացառությամբ ազատ ջրօգտագործման դեպքերի, իրականացվում է ջրօգտագործման թույլտվության հիման վրա: Ջրառի իրականացման տեխնիկական պայմանները համաձայնեցվում են **ցամաքուղղային** համակարգը շահագործող իրավաբանական կամ ֆիզիկական անձի հետ:

4. **Ցամաքուղղային** ջրեր օգտագործողը վճարում է բնօգտագործման վճար ԼՂՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5. Կրգելվում է **ցամաքուղղային** համակարգերից ջրօգտագործումը դիմախոներ ստեղծելու միջոցով:

6. **Ցամաքուղղային** ջրեր օգտագործողը ջրօգտագործման ընթացքում իր կողմից **ցամաքուղղային** համակարգին պատճառված վնասը հատուցում է սեփական միջոցների հաշվին:

7. **Ցամաքուղղային** ջրերի օգտագործումն իրականացվում է պայմանագրային հիմունքներով՝ ԼՂՀ կառավարության որոշմամբ հաստատված ոռոգման ջրի մատակարարման և օգտագործման կանոններով սահմանված կարգով:

ԼՂՀ կառավարության աշխատակա  
զմի  
ղեկավար-նախարար

Ս. Գրիգորյան

